նուց, կաղամախու կոճերից միակտուր կարասիներ է ճախարակել, քուղա, գրուան, խալխալ ու մաղ է պատրաստել, անտառը չահագործել եւ դրացիների համար գործիքներ է պատրաստել: Նոյն իսկ կաւ է կոխրճել–կուժ, կուլա, փարչ, պուտուկ, բղուղ, կարաս է թրծել եւ տարածել շրջակայ գաւառները: Ինչպէս մեղուն առատութեամբ մեղր է մատակարարել մեր երկրին, Ճորոխի Աւազանի արհեստաւորն էլ իր ձեռարհեստով ողողել է: Ճորոխի Աւազանի այգեպանը ողջ ամեռն աշխատում է պարարտացնել իր այգիներն, ագարակները, որ գարնան գործի սկսի. նրա համար ամեռ չկայ: Այս երկիրը զարգացրել է հիւսնութիւնը. երեք վարպետ առանց մշակի մի շաբաթուան մէջ կարող են 12 սենեկից մի եռայարկ տուն շինել գերաններից եւ տախտակներից ամբողջ կազմով: Շինութեան հիմնական գերաններն ու ցիցերը ամրացնում են, երեք յարկը իրար վերայ, նախ ամենարարձր յարկն են շինում, ապա միջին յարկը եւ վերջը ստորին–գետնայարկը: Ինչպէս Կ.Պոլսում մեծ հռչակ ունին քարաշէն հիմնարկութիւնների համար Բայբուրդցիները, այնպէս անուանի են Ճորոխի Աւազանի հիւսները: Կ.Պոլսի եւ Սինոպի նաւաշինարանների գործերը Սեւ Ծովի, Տրապիզոնի շրջակայքի եւ Ճորոխի Աւազանի հիւսներն են զարգացրել վերջին հինգ դարի